

Թիւ 27257
Մարտ 24, 1981

Հոգեշնորհ
Տ. Պարէտ Վրդ. Երէցեան
Հովիւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ
Նախագահ Ժխական Խորհուրդի
Մոնթրէալ.

Սիրելի Հայր Պարէտ,

Ստացած ենք ձեր սեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ
Փետրուար 22ին եւ Մարտ 1ին գումարուած համայնքիդ ծխական ժողովին մէջ կա-
տարուած է ծխական Խորհուրդի հինգ անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով
քուէարկութեան արդիւնքը կը խնդրէք ընտրուած անձերու վախերացման պաշտօնա-
գիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ծխական Խորհուրդի նորընտիր անդամները,
ըստ ստորեւ արուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան ղրկել ծխական Խորհուրդի նորընտիր Դիւանի
անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով ծխական Խորհուրդի նոր կազմը, ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն
կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն
Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուր-
դին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Ալեքեան Դարօ
Գարիպեան Աշոտ
Տիգրանեան Գրիգոր
Այվատեան Փիրայր
Թադոսեան Անդրիանիկ